Արձանագրություն 3

«Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ կարիքների համար « ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ -18/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով Դեղորայքի գնում կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 10.10.2018թ. ժամը 12:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Ս.Խաչատրյան – «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բուժ.գծով փոխտնօրեն

Անդամներ

Ա.Է.Սիմոնյան- «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գլխ. հաշվապահ

Ա.Գ.Սիմոնյան - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի դեղատան վարիչ

Քարտուղար-գնումների համակարգող

Լ.Բազիկյան - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հաշվապահ, գնումների համակարգող

1. **<u>ՀՀ Կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին</u>**

1. Ընդունել ի գիտություն, որ

1.1 Համաձայն ՀՀ Կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին պահանջի՝ 02.10.2018թ.-ին հարցում է ներկայացվել ՀՀ կառավարության պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի և «Արֆարմացիա» ՓԲԸ-ի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 05.10.2018թ.-ին ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն և «Արֆարմացիա» ՓԲԸ-ն չեն ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետբյուջեի նկատմամբ:

1.2 «ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ -18/2» ծածկագրով էլեկտրոնայի աճուրդով գնման ընթացակարգի առաջին տեղ գրված մասնակիցներ ճանաչված «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի և «Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից համակարգի միջոցով հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը.

-Հանձնաժողովի քարտուղարը ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև գնահատման թերթիկների երկուական օրինակները տրամադրել է ընթացակարգի գնահատող հանձնաժողովին:
-Հանձնաժողովի անդամները գնահատման թերթիկների մեկական օրինակները ներկայացրել են հանձնաժողովի քարտուղարին:
Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

2. **<u>Էլեկտրոնային աճուրդով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին</u>**

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել «ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ-18/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	բավարար
«Արֆարմացիա» ՓԲԸ	բավարար

-Մասնակիցների կողմից ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:
Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

3. **<u>Հաստատել «ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ -18/2» գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին</u>**

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ «ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ - 18/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով գնման ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարել «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին՝ 2-րդ, 3-րդ, 8-րդ և 11-րդ չափաբաժինների մասով, «Արֆարմացիա» ՓԲԸ-ին՝ 7-րդ և 12-րդ չափաբաժինների մասով:
Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

4. **<u>Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին</u>**

"Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

4.2 Գնման ընթացակարգի արդյունքների հաստատման նիստից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում <<Վեդու բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի տնօրենին տրամադրել մրցույթի արդյունքների հաստատման նիստի արձանագրության պատճենը՝ օրենքով սահմանված կարգով անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու նպատակով: Ընտրված մասնակցի հետ պայմանագիրը պետք է կնքվի հրավերով սահմանված կարգով. Այն է՝ ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն

ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիրը ստորագրելու և պատվիրատուին պայմանագրի ապահովումը ներկայացնելու պայմանով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

Հանձնաժողովի՝ էլեկտրոնային աճուրդով գնման ընթացակարգի արդյունքների ամփոփման վերաբերյալ հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելու օրը ժամը 16:00-ին, «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքում, հասցե՝ ք.Վեդի, Գայի 2:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

Գնահատող
հանձնաժողովի նախագահ՝ _____ Ս. Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Է.Սիմոնյան

_____ Ա. Գ.Սիմոնյան

_____ Լ.Բազիկյան

Քարտուղար՝